ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը	Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան
Հապավումը	ԵՊԲՀ
Գործունեության հասցեն	Կորյունի 2, Երևան, 0025, Հայաստան
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը	Չի ունեցել

ՕՐԵՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԸ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով՝ ՈԱԱԿ-ի ներկայացուցիչների, փորձագիտական խմբի, գործընթացի ՈԱԱԿ համակարգողի մասնակցությամբ քննարկեց Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (այսուհետ՝ ԵՊԲՀ) կողմից ներկայացված ինքնավերլուծության, փորձագիտական զեկույցի, զեկույցում նշված թերությունների վերացման մասին ԵՊԲՀ-ի գործողությունների ծրագրի և այդ ծրագրի վերաբերյալ փորձագիտական խմբի կարծիքի հիման վրա կազմված ԵՊԲՀ -ի ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ ՈԱԱԿ-ի եզրակացության նախագիծը:

Քննարկման արդյունքում ամրագրվեց հետևյալը.

Հավատրմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	**1 մարտի 2012**
բուհի ինքնավերլուծության ներկայացում՝	**2 ապրիլի 2013**
փորձագիտական այցի իրականացում՝	**9-12 հունիսի 2013**

փորձագիտական զեկույցի ներկայացում՝	21 հոկտեմբերի 2013
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝	20 փետրվարի 2014

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով[2]:

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Գնահատում իրականացնելիս հաշվի է առնվել, որ Երևանի պետական բժշկական համալսարանն իր գործունեության 90 տարիների ընթացքում տրամադրել է բժշկական բարձրագույն կրթություն՝ որպես կրթական ու գիտական պետական բարձրագույն ուսումնական հաստատություն, որի գործունեությունը նպատակաուղղված է բժշկական, դեղագիտական, հասարակագիտական, հումանիտար հիմնարար գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը:

Իր գործունեության ընթացքում համալսարանը հավատարմագրում չի անցել, ուստի ինստիտուցիոնալ կարողությունների տասը տիրույթների ուղղությամբ ինքնավերլուծության այս գործընթացը համալսարանի առաջին փորձն էր:

2006թ-ին ընդունված «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն ԵՊԲՀ-ում հաստատվել է բարձրագույն կրթության երկաստիճան համակարգ: Ինչպես սահմանված է առաքելությամբ, համալսարանը պետք է «պատրաստի ժամանակակից, ՀՀ Որակավորումների ազգային շրջանակին համահունչ գիտելիքով, հմտություններով և կարողություններով օժտված մրցունակ մասնագետներ»: Երկաստիճան կրթության պահանջներին համահունչ լինելու նպատակով բակալավրի և մագիստրատուրայի բոլոր կրթական ծրագրերը վերանայվել և հաստատվել են՝ սկսած 2006 թվականից: Կրթական ծրագրի մեթոդաբանության մեջ հետազոտության ապահովման քաղաքականությունը դեռևս ամբողջապես մշակված չէ: Համալսարանն ունի հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով օտարերկրյա ուսանողների դասավանդման լավ փորձ:

ԵՊԲՀ-ում տարվել են նաև աշխատանքներ համալսարանի ենթակառուցվածքը բարելավելու և այն կրթական ծրագրերին համապատասխանեցնելու ուղղությամբ: Ռազմավարական ծրագրում կարևորվում են համալսարանի լսարանային ֆոնդը, շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան, կլինիկաների, գրադարանի և ուսումնական միջավայրի այլ բաղադրիչների վերակառուցման ու վերազինման խնդիրները: Պետական բյուջետային մուտքերում հիմնական մաս են կազմում ուսանողական նպաստները, բժիշկների և բուժքույրերի վերապատրաստումների արդյունքում գոյացած ֆինանսական միջոցները, թեմատիկ գիտական ֆինանսավորումը և բուժծառայության համար նախատեսված միջոցները: Արտաբյուջետային մուտքերը հիմնականում գոյանում են վճարովի ուսուցմամբ ուսանողների ուսման վարձավճարների հաշվին: Սակայն, համալսարանում դեռ նկատվում է առաքելության և նպատակների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների և սարքավորումների ձեռքբերման համար ֆինանսական հնարավորությունների սղություն:

ԵՊԲՀ-ի գործունեությունն իրականացվում է մոտիվացված և նվիրված պրոֆեսորադասախոսական կազմի առկայությամբ, ինչը նպաստում է սերտ համագործակցության և

---

[1] **Հավելված 1** ՝ Փորձագիտական խմբի կազմը և ՈԱԱԿ-ի աջակցող անձնակազմը

[2] **Հավելված 2**՝ Ամփոփ գնահատում

գործընկերային քննարկումների իրականացմանը: Դասավանդման, գիտական և կլինիկական աշխատանքներում ներգրավված աշխատակազմի ներկայացուցիչների թիվը կազմում է 1100, որոնցից 162-ը բժշկության ոլորտի դոկտոր/գիտությունների թեկնածուներ են, 80-ը՝ պրոֆեսորներ: Համաձայն ռազմավարական ծրագրի նպատակների՝ կատարվել է պրոֆեսորադասախոսական կազմի համալրում: Այնուամենայնիվ, առկա է այլ համալսարաններից ավելի շատ դասախոսների ներգրավման անհրաժեշտություն, ինչպես նաև նրանց որակավորման բարձրացման և մասնագիտական զարգացմանն ուղղված գործընթացների իրականացում:

ԵՊԲՀ-ում ուսանողները ներգրավված են հաստատության կառուցվածքային տարբեր միավորներում, ինչը նպաստում է կրթական գործընթացում նրանց ակտիվ մասնակցությանը: Ներկայումս համալսարանի յոթ ֆակուլտետներում ուսանում է 5500 ուսանող, որոնցից 1140-ը արտասահմանցիներ են: Ուսանողների ընդունելությունն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգի համաձայն: Համալսարանում իրականացվում են ուսանողների համար լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և պրոֆեսորադասախոսական կազմի կողմից խորհրդատվությունների տրամադրման, ինչպես նաև ուսանողներին աջակցության գործընթացներ: ԵՊԲՀ-ը մշակում է ծրագրեր կարիերայի պլանավորման համար ուսանողական կենտրոնի ուղղությամբ:

Համալսարանի կառավարման կառուցվածքը բազմաշերտ է, որն ապահովում է որոշումների կայացման կանոնակարգված գործընթաց: Ինստիտուցիոնալ մակարդակում, սակայն, կրթական ծրագրերի և այլ գործընթացների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ներքին կառուցվածքը դեռևս համակարգված չէ: Համալսարանի կառավարման համակարգը պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողներին հնարավորություն է տալիս ներգրավվել կառավարման տարբեր խորհուրդներում, սակայն դեռևս առկա է արտաքին շահակիցների հետ համագործակցության ապահովման անհրաժեշտություն:

ԵՊԲՀ-ում կրթության որակի ապահովման նպատակով 2006-2011թթ. գործել է Բարեփոխումների և ինտեգրացիայի բաժինը, որի հիմնական նպատակն է եղել ուսումնասիրել եվրոպական և ամերիկյան բժշկական դպրոցների փորձը և մշակել առաջարկություններ՝ կրթական գործընթացում Բոլոնյան համակարգի պահանջներից բխող փոփոխություններ կատարելու վերաբերյալ: 2011թ. ստեղծվել է Որակի գնահատման և ապահովման կենտրոնը, ինչպես նաև մշտական հանձնաժողովն ու համապատասխան ֆակուլտետային հանձնաժողովները: Մշակվել են կենտրոնի քաղաքականությունն ու ռազմավարությունը, ինչպես նաև կանոնակարգերն ու ընթացակարգերը, որոնք ուղղված են համալսարանի տարբեր միավորների կողմից իրականացվող աշխատանքների որակի գնահատմանը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

1) ԵՊԲՀ-ը ունի հստակ սահմանված **առաքելություն,** որի իրականացմանը նպաստում են մոտիվացված պրոֆեսորադասախոսական կազմը: Աշխատակազմը համախմբված է աշխատում, իսկ քննարկումները կրում են համագործակցային բնույթ:
2) Նվիրված **պրոֆեսորադասախոսական կազմն** ընդգրկված է կրթական ծրագրի մշակման և ուսանողների ուղղորդման գործընթացներում:
3) **Ուսանողները ներգրավված են** բոլոր մակարդակներում, ինչը պետք է պահպանել: Ուսանողների ձայնը լսելի է և ազդեցիկ որոշումների կայացման գործընթացում:
4) **Ծրագրերն** ունեն բավականին մանրամասն և լավ կառուցված ուսումնական պլաններ, որոնք հիմնված են դասընթացների վրա: Բոլոր ծրագրերի համար ուսումնառության ակնկալվող արդյունքները սահմանված են:

5) **Դասավանդման և ուսուցման մեթոդները** ավանդական բնույթ ունեն, հետևապես համապատասխանում են ավանդական կարգին և դասախոսակենտրոն ուսումնական ծրագրին:
6) **Ուսանողների գնահատումը** նույնպես բավականին ավանդական է և որպես այդպիսին՝ համահունչ ուսումնական ծրագրին:
7) Համալսարանը սահմանափակ բյուջեով կարողացել է ստեղծել **ուսումնական միջավայր**, որը ներառում է գրադարան և ՏՏ հարմարություններ: Ներկա իրավիճակում դրանք բավարար են:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

1) **Հետազոտական աշխատանքները** սահմանափակ են և՛ արդյունքի, և՛ աշխատակազմի ու ուսանողների՝ հետազոտության մեջ ներգրավվածության աստիճանի տեսանկյունից: **Բյուջեի** 5%-ից քիչ է տրամադրվում հետազոտությանը:
2) Համալսարանում բացակայում է հստակ **կրթական հայեցակարգ**:
3) Ուսումնառության ակնկալվող արդյունքների և **գնահատման** միջև կապը հստակ չէ: Հատկապես պետք է ուշադրություն դարձնել կլինիկաներում ձեռքբերվող հմտությունների գնահատմանը:
4) Սահմանափակ թվով ուսանողներ և աշխատակազմի ներկայացուցիչներ են միայն մասնակցում միջազգային գործընթացներին, փոքր է և՛ աշխատակազմի, և՛ ուսանողների միջազգային շարժունությունը: Այս առումով կլինիկայի աշխատողները առավելություն ունեն դասավանդողների նկատմամբ:
5) Փորձագիտական խումբը միջազգային **բենչմարքինգի** հիմքեր չի նկատել: Որոշ ամբիոններ ներգրավված են բենչմարքինգի գործընթացում, բայց այն ինստիտուցիոնալ մակարդակով չի իրականացվում:
6) Աշխատակազմի և ուսանողների համար **ՏՏ համակարգը** սահմանափակ է:
7) **Արտաքին շահակիցների** ազդեցությունը սահմանափակ է:
8) Համալսարանը հիմնականում **կենտրոնանում է** բժշկական ծրագրերի վրա, մինչդեռ առաջարկում է հավասարապես կարևոր այլ ծրագրեր:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաքելությունը և նպատակները.

1) ապահովել համալսարանի նախանշված հավակնությունների, քաղաքականության և գործունեության միջև համապատասխանությունը՝ հաշվի առնելով առկա ռազմավարությունը, որն ուղղված է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրմանը,
2) ուշադրություն դարձնել արտաքին կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցության հաստատմանը՝ կրթական ծրագրերի ուսումնառության արդյունքների և աշխատաշուկայի պահանջների միջև համապատասխանությունն ապահովելու նպատակով,
3) մշակել մեխանիզմներ կրթական գործընթացում շահակիցների արդյունավետ ներգրավվածությունն ապահովելու համար,
4) ընդլայնել արտաքին շահակիցների ներգրավվածության և ազդեցության հնարավորությունները,
5) սահմանել համալսարանի առաքելության և նպատակների գնահատման առավել կառուցվածքային մոտեցում, վերհանել ցուցանիշներ և նշանակել պատասխանատուներ գնահատման և բարելավումների զարգացման գործընթացի ի իրականացման համար

Կառավարումն ու վարչարարությունը.

6) պարզեցնել համալսարանի կառուցվածքը, բարձրացնել կառավարման համակարգի արդյունավետությունը սահմանված մեխանիզմների միջոցով,
7) մշակել կամ բարելավել մեխանիզմները կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորման, ինչպես նաև մշտադիտարկման համար համալսարանի առաքելությանը և նպատակներին համապատասխան,
8) մշակել ցուցանիշներ, որոնք թույլ կտան «ախտորոշել» գործոնների հետագա ազդեցությունը համալսարանի գործունեության բոլոր ոլորտների վրա՝ ակտիվ ներգրավելով արտաքին շահակիցներին և հաշվի առնելով նրանց արձագանքները որոշումների կայացման գործընթացներում,
9) կիրառել որակի կառավարման սկզբունքը մեխանիզմների մշակման գործընթացում՝ ընթացակարգերի և քաղաքականության կառավարման նպատակով,
10) բարելավել համալսարանի կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության, դրանց վերլուծությունների և կիրառման վերաբերյալ տվյալների հավաքագրման գնահատման մեխանիզմները՝ օգտագործելով ինտեգրացված թվայնացված համակարգ

Մասնագիտության կրթական ծրագրերը.

11) հաշվի առնել բազմադիսցիպլինար թեմատիկ մոտեցումը ծրագրերի համար,
12) իրականացնել սահմանված քաղաքականությունը դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության ուղղությամբ, որը կնպաստի ուսանողակենտրոն ուսուցմանը՝ հաշվի առնելով ուսանողների ինտերակտիվ մասնակցության կարևորությունը և փոքր խմբերով ուսուցումը,
13) բարելավել ծրագրի արդյունավետության գնահատման քաղաքականությունը
14) ամրապնդել կապը ուսուցման և հետազոտության միջև

Ուսանողները.

15) հիմնել կարիերայի կենտրոն, որը կամրապնդի աշխատաշուկայի և ծրագրերի միջև կապը, ինչպես նաև կօգնի ուսանողներին կողմնորոշվել բուհն ավարտվելուց հետո,
16) մշակել որակի ապահովման մեխանիզմներ ու գործիքներ՝, ուսանողներին տրամադրվող խորհրդատվության և աջակցության ծառայությունների արդյունավետությունը գնահատելու և բարելավելու համար,
17) ավելի շատ կենտրոնանալ հետազոտության և բոլոր ծրագրերում հետազոտական աշխատանքների վրա (ավելի մանրամասն տես չափանիշ 6),
18) զգալի ջանքեր ներդնել ուսանողների միջազգայնացման ուղղությամբ

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը.

19) ապահովել պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ մասնակցությունը հետազոտական աշխատանքներում,
20) մշակել հստակ սահմանված քաղաքականություն և ընթացակարգեր պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացման համար, վերհանել հատուկ կարիքները հետագա բարելավման համար,
21) կազմակերպել մասնագիտական վերապատրաստումներ երիտասարդ դասախոսների համար,
22) ներգրավել դասախոսներ արտասահմանից,
23) պրոֆեսորադասախոսական կազմին հնարավորություն տալ իրականացնելու վերապատրաստումներ ԵՊԲՀ-ից դուրս

Հետազոտությունը և զարգացումը.

24) լրամշակել համալսարանի՝ հետազոտության ուղղությամբ հետաքրքրություններն ու հավակնություններն արտացոլող քաղաքականությունը: Դասախոսները և ուսանողները պետք է ակտիվորեն ներգրավված լինեն հետազոտական աշխատանքներում, իսկ հետազոտական ծրագրերի ղեկավարները պետք է հաշվի առնեն միջազգային չափորոշիչները,
25) կենտրոնանալ հետազոտության որոշակի ոլորտների վրա՝ համալսարանի ռազմավարությանը համապատասխան,
26) հետազոտությանը ավելի կենտրոնական դեր և կառուցվածք տալ հաստատությունում և կրթական ծրագրերում,
27) ապահովել պրոֆեսորադասախոսական կազմի ավելի ակտիվ խրախուսումը գիտական գործունեության միջազգայնացման տեսակետից և գնահատել այդ գործունեության արդյունավետությունը,
28) հստակեցնել հետազոտությունն ու ուսումնական գործընթացը կապող մեխանիզմները՝ գնահատելով դրանց արդյունավետությունը,
29) նպաստել միջազգային համագործակցությանը և ակտիվորեն գիտական կապեր հաստատել արտերկրյա առաջատար բժշկական կենտրոնների և համալսարանների հետ,
30) վերանայել հետազոտության համար բյուջեի բաշխումը և ռազմավարությունները՝ հետազոտական ծրագրերի համար արտաքին ֆինանսական ռեսուրսներ ձեռքբերելու համար

Ենթակառուցվածք և ռեսուրսներ.

31) ընդլայնել ֆինանսական ռեսուրսները՝ անհրաժեշտ ռեսուրսներ և սարքավորումներ ձեռք բերելու համար,
32) վերանայել SS սարքավորումների ողղությամբ ներդրումներ կատարելու հարցը,
33) հիմք համարել ոտորաբաժանումների կարիքների գնահատումը՝ ֆինանսական ռեսուրսների բաշխման համար,
34) մշակել ընթացակարգեր, գործիքներ և ժամանակացույց՝ գնահատելու կրթական ռեսուրսների արդյունավետությունը, կիրառելիությունն ու հասանելիությունը,
35) մշակել SS ինտեգրացված համակարգ և հստակեցնել տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացի կառավարման քաղաքականությունը,
36) բարելավել հատուկ կարիքներ ունեցող ուսանողների հարմարությունները

Հասարակական պատասխանատվությունը.

37) մշակել ավելի բազմազան գործիքներ ԵՊԲՀ-ի գործընթացների և ընթացակարգերի հաշվետվողականությունն ապահովելու համար,
38) մշակել հետադարձ կապի ապահովման ֆորմալ գործընթացներ, ինչպես նաև դրանց արդյունավետությունը գնահատելու մեխանիզմներ

Արտաքին կապերը և միջազգայնացումը.

39) մշակել հստակ քաղաքականություն և կանոնակարգեր, որոնք կխթանեն միջազգային կապերը,
40) ավելի շեշտադրել միջազգային բենչմարքինգի գործընթացը,
41) տեղայնացնել և օգտագործել միջազգային լավագույն փորձերը հետազոտության և կրթության համար,
42) մշակել չափորոշիչներ և մեխանիզմներ՝ միջազգայնացմանը և արտաքին կապերին ուղղված գործունեությունը գնահատելու համար,
43) ընդլայնել օտար լեզվով դասավանդման հնարավորությունները

Որակի ներքին ապահովման համակարգը.

44) ապահովել որակի ապահովման ֆորմալ ընթացակարգերի կիրառությունը,
45) շարունակել ներդրումները շահակիցների ներգրավվածության ուղղությամբ, հատկապես պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցության ապահովմամբ՝ որակի մշակույթի հետագա զարգացման համար,
46) ընդլայնել մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները՝ նպատակաուղղելով որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման արդյունավետության բարձրացմանը և ներգրավելով ավելի շատ շահակիցներ,
47) պարբերաբար իրականացնել ինքնագնահատման գործընթացներ և ապահովել հետադարձ կապի մեխանիզմների առկայությունն ու կիրառելիությունը,
48) ամրապնդել կապը կառավարման և որակի ապահովման գործընթացների միջև (տես նաև չափանիշ 2)

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ

Միջազգային չափանիշներին համապատասխան գործընկերային գնահատման արդյունքում առաջարկվում է.

1) Հաշվի առնելով բավականին ավանդական համալսարանի ներկա իրավիճակը և այն փաստը, որ ԵՊԲՀ-ը որդեգրել է արդիականացման քաղաքականություն՝ ԵԲԿՏ-ին ընդառաջ, նկատվում է անհամապատասխանություն, որի հաղթահարման համար համալսարանը պետք է իրականացնի պլանավորում: Բացի դա, ԵՊԲՀ-ը պետք է կազմակերպի քննարկումներ՝ պարզաբանելու Բոլոնիայի հասկացությունն ու հետևանքները: Առաջարկվում է սահմանել **փոփոխությունների կառավարման նախագիծ**, որը կներառի առաջիկա 5 տարիների համար հստակ սահմանված նպատակների և խնդիրների ժամանակացույց:

2) Համալսարանը պետք է փորձի իր ներքին կառուցվածքն ավելի պարզեցնել և առավել արդյունավետ դարձնել: Լավ սկիզբ կարող է լինել բոլոր հանձնաժողովների գործառույթների վերանայումը և դրանց քանակի նվազեցումը: Համալսարանը կարող է ընտրել ավելի **նվազագույն բաղադրիչներով կազմակերպական կառուցվածք:**

3) Ուսումնական գործընթացը բարեփոխելու նպատակով անհրաժեշտ է աջակցել **մասնագիտական կրթական բաժնին**՝ ուսումնակրթական միջավայրի արդիականացման համար: Այս կենտրոնական բաժինը միջազգային վերջին զարգացումներին ծանոթ կրթության ոլորտի փորձագետներով կարող է աջակցել համալսարանի անձնակազմին ուսումնական այնպիսի հարցերում, ինչպիսիք են ուսումնական պլանի մշակումը, գնահատումը և ուսանողին աջակցության տրամադրումը: Կարևոր է ունենալ հստակ կրթական հայեցակարգ՝ հիմնված միջազգային վերջին մոտեցումների վրա և համահունչ սահմանված նպատակին: Մասնագետների կրթական բաժինը կարող է առաջնորդել այս հայեցակարգը մշակելու հարցում՝ ներգրավելով բոլոր ներքին շահակիցներին: Համալսարանում առկա լավ փորձը նույնպես կարող է օգտակար լինել (Հանրային առողջապահություն):

4) Հատուկ ուշադրության պետք է արժանացնել **աշխատակազմին և դրա համալրման քաղաքականությանը:** Համալսարանը պետք է ներդրումներ կատարի արտասահմանից մասնագետներ գրավելու ուղղությամբ: Հրավիրված պրոֆեսորների և փոխանակման ծրագրերով աշխատակազմի անդամների թիվը նույնպես պետք է մեծացնել: Համալսարանը պետք է հայ անձնակազմին խրախուսի և աջակցի արտասահման մեկնելու ու համալսարանից դուրս նրանց վերապատրաստելու ուղղությամբ: ԵՊԲՀ-ը պետք է նաև աշխատի երիտասարդ

մասնագետներին մասնագիտական վերապատրաստումներ տրամադրելու ուղղությամբ: Առկա են վերապատրաստման կենտրոն ստեղծելու ծրագրեր, և դա դրական զարգացում է:

5) Պետք է ապահովել պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ակտիվ ներգրավվածությունը **հետազոտական աշխատանքներում**: Անհրաժեշտ է վերանայել հետազոտությանն առնչվող քաղաքականությունը և համալսարանի գործունեության մեջ և կրթական ծրագրերում ավելի կարևորել հետազոտությունը: Հետազոտական աշխատանքների ղեկավարները պետք է գործեն միջազգային չափանիշներին համապատասխան: Հետազոտությունը պետք է պարտադիր լինի բոլոր ուսանողների և դասախոսների համար և ներառվի ուսումնական պլանում՝ հետազոտական աշխատանքների համար համապատասխան կրեդիտների բաշխվածությամբ: Համալսարանում դասավանդողները պետք է լինեն նաև հետազոտողներ: Անհրաժեշտ է նաև կենտրոնանալ համալսարանի ռազմավարությանը համապատասխան ընտրված որոշակի հետազոտական ուղղությունների վրա, ոչ թե յուրաքանչյուր դասախոս զբաղվի իր հետազոտական աշխատանքով: Գերազանցության կենտրոնների ստեղծումն անշուշտ պետք է հաշվի առնել: Գործող հետազոտական կենտրոնի դերը նույնպես պետք է հստակեցնել և, ինչպես արդեն նշվել է, վերանայել հետազոտության համար հատկացվող ֆինանսական միջոցները:

6) **Ռեսուրսների** վերաբերյալ անհրաժեշտ է մշակել ուսանողների համար տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ինտեգրացված համակարգ: Համալսարանը պետք է հաշվի առնի ՏՏ ուղղությամբ ներդրումները՝ էլեկտրոնային գրադարանը և համակարգիչները՝ թղթային տարբերակով գրքերի և ամսագրերի փոխարեն: Կլինիկաների որոշ սարքավորումներ ժամանակակից են, սակայն միաժամանակ որոշները առկա չեն կամ հին են: Կլինիկաների, համալսարանների և անգամ առևտրային ձեռնարկությունների հետ համագործակցությունը պետք է հաշվի առնել, քանի որ արդյունքում հնարավոր է օգտագործել տեխնոլոգիապես բարձր, հետևապես թանկարժեք սարքավորումներ, սարքեր և այլն: Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար նախատեսված հարմարությունները նույնպես բարելավման կարիք ունեն:

Երևանի պետական բժշկական համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման ընթացքում տրված խորհրդատվություններն ընդհանուր առմամբ վերաբերում են այն խնդիրներին, որոնք առնչվում են Բոլոնիայի գործընթացի շրջանակներում փոփոխություններ կատարելու համալսարանի ձգտմանը:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԲՈՒՀԻ ԾՐԱԳԻՐԸ

Ուսումնասիրելով Երևանի պետական բժշկական համալսարանի փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը, կարելի է եզրակացնել.

1. Համալսարանը հանձն է առել իրականացնել հավատարմագրման բոլոր տասը չափանիշների շրջանակներում նկարագրված խնդիրների շուրջ տրամադրված հիմնական խորհրդատվությունները:

ա) «Առաքելությունը և նպատակները» չափանիշի շրջանակներում բուհը հիմնականում ճիշտ է ըմբռնել խորհրդատվություններից բխող խնդրի դրվածքը, սակայն այստեղ քայլեր չի նախատեսել կրթական գործընթացում շահակիցների արդյունավետ ներգրավվածությունն ապահովելու, ինչպես նաև արտաքին շահակիցների ներգրավվածության և ազդեցության

հնարավորություններն ընդլայնելու համար: Միաժամանակ, ժամանակացույցում միջոցառումների ժամանակահատվածը շատ ընդհանուր է և հնարավոր չէ պարզել դրա տրամաբանական հաջորդականությունը:

բ) «Կառավարում և վարչարարություն», «Ուսանողներ», «Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմը», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայնացում», «Որակի ներքին ապահովման համակարգ» չափանիշների շրջանակներում բուհը հիմնականում ճիշտ է ըմբռնել խորհրդատվություններից բխող խնդրների դրվածքները, մշակել է դրանց համապատասխան գործողություններ և քայլեր:

գ) «Մասնագիտական կրթական ծրագրեր» չափանիշի շրջանակներում բուհը հիմնականում ճիշտ է ըմբռնել խորհրդատվություններից բխող խնդրի դրվածքը: Սակայն, այստեղ հստակ չեն այն գործողությունները, որոնք ուղղված են ծրագրի արդյունավետության գնահատման քաղաքականության մշակմանը: Բացի այդ, պլանում նախատեսված գործողությունների համար հստակ նշված չեն պատասխանատուները:

դ) «Ենթակառուցվածք և ռեսուրսներ» չափանիշի շրջանակներում բուհի կողմից հիմնականում ճիշտ է ըմբռնվել խորհրդատվություններից բխող խնդրի դրվածքը: Սակայն, այստեղ հստակ չեն այն գործողությունները, որոնք ուղղված են SS ինտեգրացված համակարգի մշակմանը և տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացի կառավարման քաղաքականության հստակեցմանը: Հստակ ձևակերպված չեն վերջնարդյունքները և դրանց ցուցիչները:

ե) «Հասարակական պատասխանատվություն» չափանիշի շրջանակներում բուհի կողմից որոշակիորեն ճիշտ է ըմբռնվել խորհրդատվություններից բխող խնդրի դրվածքը: Սակայն, պլանում հստակ նշված չեն այն գործողությունները և քայլերը, որոնք պետք է ապահովեն բուհի հետադարձ կապի ֆորմալ գործընթացները, ինչպես նաև դրանց արդյունավետությունը գնահատելու մեխանիզմները:

Ուսումնասիրելով ԵՊԲՀ-ի փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը միջազգային չափանիշներին համապատասխան գործընկերային գնահատման տեսանկյունից, կարելի է եզրակացնել.

ա) Ծրագրում հստակ չի երևում ***փոփոխությունների կառավարման նախագիծը***, որը կներառի առաջիկա 5 տարիների համար հստակ սահմանված ժամանակացույց:

բ) ԵՊԲՀ-ը անդրադարձել է ***բուհի ներքին կառուցվածքի պարզեցման և հստակեցման խնդրին՝*** կառավարման համակարգի գործունեության բարելավման միջոցով:

գ) ***Դասավանդման և ուսումնառության միջավայրի արդիականացմանն*** ուղղված բուհը նախատեսել է իրականացնել բժշկական կրթական հայեցակարգի մոդեռնիզացիա, ինչը ենթադրում է կրթական ծրագրերում փոփոխությունների իրականացում միջազգային բենչմարքինգի կամ արտաքին պահանջների հիման վրա: Սակայն, այն դիտարկմանը, որ անհրաժեշտ է ունենալ միջազգային արդի զարգացումներին համապատասխան կրթական հայեցակարգ, բուհը չի անդրադարձել այն հստակ փոփոխություններին, որոնք նախատեսում է կատարել ուսումնական պլաններում, ինչպես նաև ուսանողների գնահատման

գործընթացում: Գործողությունների ծրագրում հստակ չէ միջազգային բենչմարքինգի իրականացման մոտեցումները:

դ) ***Պրոֆեսորադասախոսական կազմի*** վերաբերյալ բուհը նախատեսել է մշակել դասախոսների (այդ թվում նաև երիտասարդ) մասնագիտական վերատրաստման ծրագիր: Փորձագետների կողմից կարևորվել է նաև արտերկրում պրոֆեսորադասախոսական կազմի համար վերապատրաստումների, ինչպես նաև օտարերկյա պրոֆեսորներ հրավիրելու հնարավորությունների ընդլայնումը: Բուհը նախատեսել է բարձրացնել դասախոսական անձնակազմի շարժունակությունը, սակայն պլանում բացակայում են գործընթացի իրականացման հստակ քայլերը:

ե) Բուհը նախատեսել է գործողություններ գործընկերային գնահատման արդյունքում ***հետազոտության*** ուղղությամբ կատարված խորհրդատվությունների հիման վրա, ինչը անդրադառնում է համալսարանի գիտական գործունեության նոր քաղաքականության և ռազմավարության, ինչպես նաև գիտական գերակա ուղղությունների մշակմանը, հետազոտական և ուսումնական գործընթացների միջև կապի ապահովմանը, գիտությանը հատկացվող ֆինանսական միջոցների ավելացմանը: Նախատեսված են նաև քայլեր խթանելու հետազոտական գործունեության միջազգայնացումը:

զ) ***Ռեսուրսների*** ուղղությամբ բուհը նախատեսել է կարիքների և առկա ռեսուրսների արդյունավետության գնահատում, ֆինանսական միջոցների բաշխում: Անդրադարձել է ինտեգրացված թվայնացված համակարգի խնդրին՝ նշելով այդպիսով բարելավել համալսարանի կրթական ծրագրերի և ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմները: Սակայն, ուսանողների համար անհրաժեշտ ռեսուրսների տրամադրման տեսանկյունից, պարզ չէ, թե թվայնացված այս համակարգը ինչ հնարավորություններ է տալիս: Հստակ չեն նաև անհրաժեշտ ժամանակակից սարքավորումների համալրման մոտեցումները:

2. Առկա է հստակ գործողությունների ծրագիր ռազմավարությունների մեծ մասի համար:

3. Միջոցառումների մեծ մասի հաջորդականությունը ժամանակացույցում տրամաբանական է, սակայն որոշ դեպքերում իրականացման ժամանակահատվածը շատ ընդհանուր է և հնարավոր չէ պարզել դրանց տրամաբանական հաջորդականությունը: Քայլերի մեծ մասը ներառում է իրատեսական ժամկետներ, սակայն որոշ դեպքերում բացակայում են կոնկրետ ժամկետները:

4. Գործողության համար որոշ դեպքերում նշված չեն հստակ պատասխանատուներ, իսկ բոլոր քայլերի դեպքերում նշված են պատասխանատու կառույցները:

5. Քայլերի մեծ մասի գնահատման համար կիրառվում են իրականացման մեկ կամ մի քանի չափման միավորներ, երբեմն օգտագործվում են նաև ազդեցության չափման միավորներ: Վերջնարդյունքների և դրանց ցուցիչների որոշ մասը կարիք ունի վերաանհմանման:

Եզրահանգում. Ծրագրի հիմնական մասի իրականացումը ռիսկեր չի պարունակում: Համալսարանը պլանավորել է մեկնարկել հիմնական ոլորտներում անհրաժեշտ աշխատանքների իրականացումը մոտակա երկու տարվա ընթացքում: Այժմ մշակման փուլում են գործընթացները

կանոնակարգող փաստաթղթերը, ինչը հնարավորություն կտա հետագայում գնահատելու համալսարանում իրականացվող գործընթացների արդյունավետությունը:

Ելնելով վերոգրյալից, ՈԱԱԿ-ը Հավատարմագրման հանձնաժողովին առաջարկում է իր որոշման մեջ ԵՊԲՀ-ի ուշադրությունը հրավիրել հետևյալ կետերի իրականացման վրա՝

1) առաջնահերթ լուծում տալ **Մասնագիտության կրթական ծրագրեր, Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, Ենթակառուցվածքներ և ռեսուրսներ, Որակի ներքին ապահովման համակարգ** ոլորտներում առկա խնդիրներին,
2) «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12 կետով կամ Հավատարմագրման հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում պարբերաբար ՈԱԱԿ ներկայացնել գրավոր զեկույց իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ,
3) ի նկատի ունենալով համալսարանի գործունեության միջազգայնացման հավակնությունները՝ վերանայել փորձագիտական զեկոյցում նշված թերությունների վերացման ծրագիրը, հաշվի առնելով միջազգային չափանիշներին համապատասխան գործընկերային գնահատման արդյունքները և խորհրդատվությունները,
4) բուհի կողմից ներկայացված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի վերանայման ժամանակ հաշվի առնել սույն եզրակացության մեջ նշված դիտողությունները ծրագրի վերաբերյալ:

ՈԱԱԿ-ը գտնում է, որ առաջարկվող բարեփոխումները կնպաստեն ինքնավերլուծության զեկույցում ներկայացված համալսարանի հավակնությունների իրականացմանը և հիմք կհանդիսանան հաջորդող գնահատման համար:

Փորձագ. խմբի ղեկավար **ՈԱԱԿ Համակարգող**

Հավելված 1

Փորձագիտական խմբի կազմը.

- Պրոֆեսոր **Սամվել Պիպոյան**, կենսաբանական գիտությունների դոկտոր, Երևանի պետական մանկավարժական համալսարանի կենսաբանության ամբիոնի պրոֆեսոր, «Մասնագիտական կրթության բարեփոխումներ» ՀԿ համահիմնադիր, «Ցկյանս ուսումնառության հայաստանյան լիգա» ՀԿ խորհրդի անդամ, (խմբի ղեկավար),
- Պրոֆեսոր **Բեն Վան Քեմփ**, PhD, հեմատոլոգիայի պրոֆեսոր, Բրյուսելի ազատ համալսարանի (Vrije Universiteit Brussel) նախկին ռեկտոր, Բժշկական դպրոցի նախկին դեկան, Համալսարանական հիվանդանոցի (UZ Brussels) կառավարման խորհրդի նախագահ
- Պրոֆեսոր **Հարի Հիլեն**, PhD, Ներքին բժշկության պրոֆեսոր և պատվավոր դեկան, Առողջապահության ֆակուլտետ, բժշկություն և բնագիտություն, Մաաստրիքթի համալսարան, Նիդեռլանդներ,
- Պրոֆեսոր **Լևոն Եպիսկոպոսյան**, կենսաբանության դոկտոր (PhD), մարդաբանություն, Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի էթնոգենոմիկայի լաբորատորիայի վարիչ, Գիտությունների ազգային ակադեմիա, Մարդաբանության եվրոպական ասոցիացիայի (EAA) անդամ, Մոլեկուլային և բջջային կենսաբանության հայաստանյան միություն,
- **Աննա Մարգարյան,** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի, Կրթության կառավարման բաժին:

Միջազգային դիտորդներ

- **Միշել Վեռա**- Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալության քաղաքականության մշակման գծով խորհրդատու,
- **Ֆրանկ Վամելինկ** - Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալության քաղաքականության մշակման գծով խորհրդատու:

ՈԱԱԿ-ի աջակցող աշխատակազմը.

- **Անուշավան Մակարյան**, ֆիզմաթ. գիտ թեկն., դոցենտ, Ինստիտուցինալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ղեկավար, խմբի աշխատանքների ավագ համակարգող,
- **Աննա Կարապետյան**, քաղաքագիտության մագիստրոս, Ինստիտուցինալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ավագ մասնագետ, խմբի աշխատանքների համակարգող,
- **Անուշ Մկրտչյան**, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանող, թարգմանիչ,
- **Արփինե Մկրտչյան**, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող, քարտուղար-արագրող: